ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 1534-Ն | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | Միասնական կայք 2022.10.03-2022.10.16 Պաշտոնական հրապարակման օրը 06.10.2022 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 06.10.2022 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ փոխվարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 06.10.2022 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 07.10.2022 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁԻՆ ՈՐՊԵՍ ԶՈՀ ԿԱՄ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀ ՆՈՒՅՆԱՑՆԵԼՈՒ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2022 թվականի N 1534-Ն

## ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁԻՆ ՈՐՊԵՍ ԶՈՀ ԿԱՄ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀ ՆՈՒՅՆԱՑՆԵԼՈՒ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից անձին որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ նույնացնելու ցուցիչները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**փոխվարչապետ** **Մ. Գրիգորյան**

Երևան

06.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2022 թվականի**
**հոկտեմբերի 6-ի N 1534-Ն որոշման**

## ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁԻՆ ՈՐՊԵՍ ԶՈՀ ԿԱՄ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀ ՆՈՒՅՆԱՑՆԵԼՈՒ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

1. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից անձին որպես զոհ նույնացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի առկա լինի մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը բնութագրող գործողություններին, կատարման եղանակներին և շահագործման ձևերին վերաբերող՝ սույն հավելվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերում ներկայացված ցուցիչներից առնվազն մեկական ցուցիչ:

2. Հանձնաժողովի կողմից անձին որպես հատուկ կատեգորիայի զոհ նույնացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի առկա լինի մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը բնութագրող գործողություններին և շահագործման ձևերին վերաբերող՝ սույն հավելվածի 6-րդ և 8-րդ կետերում ներկայացված մեկական ցուցիչ (մարդկանց թրաֆիքինգը և շահագործումը բնութագրող կատարման եղանակներին վերաբերող ցուցիչները հատուկ կատեգորիայի զոհերի դեպքում պարտադիր չեն, սակայն կարող են գործնականում առկա լինեն): Սույն հավելվածի 9-րդ կետում ներկայացված ցուցիչները վերաբերելի են միայն հատուկ կատեգորիայի զոհերին:

3. Սույն հավելվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերում ներկայացված ցուցիչները գործնականում կարող են հանդիպել ցանկացած համակցությամբ, ինչից ելնելով հանձնաժողովը սույն հավելվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերում ներկայացված համապատասխան մեկական ցուցիչ հայտնաբերելու դեպքում հաստատում է մարդկանց թրաֆիքինգը և շահագործումը բնութագրող գործողության, կատարման եղանակի և շահագործման կոնկրետ ձևի առկայությունը, ինչը համակցությամբ հանդիսանում է անձի նույնացում:

4. Սույն հավելվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերում ներկայացված ցուցիչներից տարբերվող, բայց գործնականում ենթադրաբար հանդիպող դրսևորումների պարագայում, հանձնաժողովը դրանք մեկնաբանում է հօգուտ որպես զոհ նույնացվող անձի:

5. Հանձնաժողովն առաջնորդվում է նույնացման ցուցիչներով՝ ըստ սույն հավելվածի 6-8-րդ կետերի:

**6. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման գործողությունների ցուցիչներն են՝**

1) անձին հավաքագրելու առնչությամբ՝

ա. հասարակությունից կամ խմբից առանձնացում կամ մեկուսացում,

բ. ցուցակագրում (գրավոր կամ բանավոր),

գ. թիրախավորում, նպատակային շփում՝ շահագործման ենթարկելու համար.

2) անձին տեղափոխելու առնչությամբ՝

ա. անձին մեկ վայրից այլ վայր տեղափոխում երկրի, ներառյալ՝ նույն քաղաքի կամ գյուղի ներսում (ներքին թրաֆիքինգ կամ շահագործում), տեղափոխման հեռավորությունը, տևողությունը, օրինական կամ ոչ օրինական լինելը՝ որևէ նշանակություն չունեն,

բ. անձին մեկ վայրից այլ վայր տեղափոխում երկրից դուրս (անդրսահմանային թրաֆիքինգ կամ շահագործում)՝ տեղափոխման հեռավորությունը, տևողությունը, օրինական կամ ոչ օրինական լինելը՝ որևէ նշանակություն չունեն.

3) փոխանցելու առնչությամբ՝

ա. անձին այլ անձանց տրամադրության (վերահսկողության) տակ թողում,

բ. անձին վաճառելու կամ այլ եղանակով օտարելու (նվիրատվություն, պարտքի մարում, վնասի փոխհատուցում, վարձակալություն, փոխանակություն և այլն) արդյունքում այլ անձի վերահսկողության հանձնում,

գ. անձին առձեռն այլ անձանց հանձնում,

դ. որպես գույքի կամ տարածքի բաղկացուցիչ մաս՝ անձանց կամ նրանց նկատմամբ վերահսկողության հանձնում.

4) թաքցնելու առնչությամբ՝

ա. անձին հասարակությունից կամ խմբից առանձնացված պահում,

բ. անձի գոյությունը հասարակությունից քողարկում,

գ. անձին իրականությունից պատսպարում, նրան անտեղյակ պահում,

դ. անձի պարտակում,

ե. կատարվող գործողության կամ այն կատարող անձի քողարկում,

զ. գաղտնի պահում գտնվելու երկրի, քաղաքի, վայրի կամ այլ պայմանների մասին.

5) ստանալու առնչությամբ՝

ա. գործարքի արդյունքում անձի ձեռքբերում,

բ. անձի կամ նրա նկատմամբ վերահսկողության ստանձնում,

գ. անձի առձեռն ընդունում,

դ. որպես գույքի կամ տարածքի բաղկացուցիչ մաս՝ անձի կամ նրա իրավունքների նկատմամբ վերահսկողության ընդունում:

**7. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կատարման եղանակների ցուցիչներն են՝**

1) բռնություն գործադրելու առնչությամբ՝

ա. մարմնական վնասվածքների առկայություն. կոտրվածքներ, արյունազեղումներ, այտուցներ, քերծվածքներ, ցանկացած այլ վնասներ,

բ. ֆիզիկական բռնության հետքերի առկայություն. սպիներ, կպումներ, այլ հետքեր,

գ. ընտանիքի անդամների կամ մերձավորների նկատմամբ բռնության կիրառում,

դ. ֆիզիկական բռնության կամ սպառնալիքի կիրառման ընթացքում զենքի կամ այլ առարկաների օգտագործում,

ե. ֆիզիկական բռնության կիրառման մասին տեղեկատվության փոխանակման, դրա նկատմամբ արձագանքի, կիրառված բժշկական կամ այլ միջամտության փաստում,

զ. ֆիզիկական բռնության դեպքերի կամ հետքերի տեսաձայնագրում, ձայնագրում կամ լուսանկարում.

2) բռնություն գործադրելու սպառնալիքի առնչությամբ՝

ա. ֆիզիկական կամ հոգեբանական բռնության կիրառման ականատես լինելը՝ ականատեսի նկատմամբ գործադրելու սպառնալիքով,

բ. այլ անձանց նկատմամբ կիրառված բռնությունից հետո անձի նախազգուշացում այդ բռնության՝ իր նկատմամբ գործադրվելու հավանականության մասին, եթե նա չկատարի համապատասխան աշխատանքը կամ չմատուցի պահանջվող ծառայությունը,

գ. բռնության սպառնալիքի կիրառման ներկայացում,

դ. վախի մթնոլորտի ձևավորում կամ վախը որպես հետագայում բռնություն չկիրառելու նախապայման դիտարկում,

ե. ընտանիքի անդամների կամ մերձավորների նկատմամբ բռնության գործադրման սպառնալիք,

զ. հոգեբանական բռնության հետևանքների, դրա կիրառման մասին տեղեկատվության փոխանակման, դրա նկատմամբ արձագանքի, կիրառված բժշկական, հոգեբանական կամ այլ միջամտության փաստում,

է. բռնության սպառնալիքների դեպքերի կամ հետքերի տեսաձայնագրում, ձայնագրում կամ լուսանկարում,

ը. «Ստոկհոլմյան համախտանիշի» առկայություն.

3) հարկադրանքի այլ ձևերի առնչությամբ՝

ա. շանտաժ,

բ. անձին իշխանության ներկայացուցիչներին, անվտանգությունն ապահովող անձանց կամ հանցավոր խմբավորումներին հանձնելու սպառնալիք,

գ. անձին ավելի վատ պայմաններում շահագործելու սպառնալիք,

դ. անձին արատավորող տեղեկությունների, անկախ դրանց իրականությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու պայմանից, հրապարակման սպառնալիք.

4) առևանգման առնչությամբ՝

ա. ազատ տեղաշարժի սահմանափակում, բ. ազատ տեղաշարժի վերահսկողություն,

գ. ֆիզիկական սահմանափակումների կիրառում կամ դրանց կիրառման հետքերի առկայություն անձի մարմնի վրա կամ նրանց բնակության կամ պահման այլ վայրերում,

դ. անձնական օգտագործման ապրանքների և ծառայությունների գնման և դրանցից օգտվելու սահմանափակումներ և վերահսկում,

ե. արտաքին աշխարհի և ընտանիքի անդամների կամ մերձավորների հետ կապի սահմանափակումներ և վերահսկում,

զ. անձը հաստատող փաստաթղթերի կամ դրանց պատճենների բացակայություն, դրանք՝ գործատուի, տեղափոխողի, միջնորդի կամ այլ անձանց մոտ պահում.

5) խաբեության առնչությամբ՝

ա. կատարվող աշխատանքների կամ ծառայությունների բնույթի, ծավալի, տևողության, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ դիտավորությամբ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությունների տրամադրում կամ դրանց մասին չներկայացում,

բ. կատարվող աշխատանքի կամ ծառայության մասին ոչ իրատեսական նախնական պայմանների առաջարկում,

գ. առաջարկվող աշխատանքի համար հստակ կամ իրատեսական պահանջների կամ այլ էական պայմանների (կրթություն, լեզվի իմացություն, մասնագիտական փորձ և այլն) չնախատեսում,

դ. աշխատանքի ընդունման կամ ծառայությունների ներգրավման պայմանների անհամապատասխանություն իրական պայմաններին,

ե. նպատակակետ երկիր մուտք գործելու կամ կոնկրետ քաղաք (բնակավայր) տեղափոխվելու պայմանների անհամապատասխանություն իրական պայմաններին,

զ. նպատակակետ երկիր կամ կոնկրետ քաղաք (բնակավայր) տեղափոխվելու և ուղևորության վճարման ուռճացում,

է. աշխատանքի կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանների անհամապատասխանություն գործող օրենսդրությանը,

ը. աշխատանքի կամ ծառայության վարձատրության բացակայություն կամ կատարված աշխատանքին կամ մատուցված ծառայությանն ակնհայտ ոչ համարժեք վարձատրություն,

թ. աշխատանքի կատարման կամ ծառայությունների մատուցման համար վաստակած գումարների տնօրինման իրական անհնարինություն, դրանց տնօրինման վերահսկում,

ժ. պարտքի (պարտքային կախվածության) վերաբերյալ փաստաթղթային ձևակերպման առկայություն, եթե նման պարտք (պարտքային կախվածություն) առկա չէր.

6) վստահությունը չարաշահելու առնչությամբ՝

ա. կատարվող աշխատանքներին կամ ծառայություններին ներգրավում անձնական կամ գործնական վստահելի հարաբերությունների օգտագործմամբ,

բ. աշխատանքի կամ ծառայության էական հանգամանքների մասին տեղեկատվության բացակայություն՝ նախկինում կատարված աշխատանքների կամ ծառայությունների մատուցման ընթացքում ձևավորված վստահելի հարաբերությունների չարաշահման արդյունքում,

գ. ընտանիքի անդամների կամ մերձավորների միջոցով համոզում կամ պարտադրում.

7) անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու առնչությամբ՝

ա. այնպիսի համոզում, որը զրկում է անձին կամարտահայտվելու և ընտրություն կատարելու հնարավորությունից, ելնելով այդ մեթոդը կիրառողի պաշտոնից, ծառայողական դիրքից կամ լիազորությունների շրջանակից,

բ. թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ալկոհոլային խմիչքի կամ այլ նյութերի միջոցով կախվածության ձևավորում,

գ. անձին միայն վատի և վատթարագույնի միջև ընտրելու հնարավորության ընձեռում,

դ. պարտքային և ֆինանսական այլ կախվածության առկայություն,

ե. պարտքի անհիմն ավելացում՝ կախվածությունն ուժեղացնելու նպատակով,

զ. ֆիզիկական կախվածություն՝ ազատ տեղաշարժի սահմանափակմամբ,

է. հոգեբանական կախվածություն՝ շանտաժի կամ ֆիզիկական բռնություն կիրառելու սպառնալիքի կիրառմամբ,

ը. հոգեբանական կախվածություն՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ տարածելու, պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող գործողությունների սպառնալիքի պայմաններում,

թ. անձին ավելի վատ պայմաններում շահագործելու սպառնալիք,

ժ. իրական կամ ենթադրյալ իշխանության օգտագործում՝ ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու համար,

ժա. իշխանական կամ ծառայողական լիազորությունների կամ դրանցով պայմանավորված ազդեցության չարաշահում,

ժբ. իշխանական կամ ծառայողական լիազորությունների անցում,

ժգ. անձի մոտ միայնակ գործելու անկարողության զգացողության ձևավորում,

ժդ. երախտապարտ կամ պարտավորվածություն զգացող անձի ներգրավում աշխատանքի կամ ծառայությունների մատուցմանը, եթե դրանց կատարման միակ հիմքն այդ երախտապարտությունը կամ պարտավորվածությունն է,

ժե. անձին՝ իշխանության ներկայացուցիչներին, անվտանգությունն ապահովող անձանց կամ հանցավոր խմբավորումներին հանձնելու սպառնալիք,

ժզ. անհիմն կամ օրենսդրությամբ չնախատեսված կարգապահական պատասխանատվության կամ պատժի կիրառում.

8) հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ խոստանալու կամ առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու առնչությամբ՝

ա. հեղինակությունն օգտագործելն անձին ենթարկելու, հրամանները, կարգադրությունները կամ հանձնարարություններն անվերապահորեն կատարելու համար,

բ. վերահսկող անձի հետ վիճելու կամ հակաճառելու արգելք,

գ. վերահսկող անձի հետ վիճելու կամ հակաճառելու դեպքում՝ անհամաչափ կամ ոչ իրավաչափ կարգապահական պատասխանատվության, պատժի կամ այլ ազդեցության ենթարկում,

դ. վերահսկող անձի կողմից անձի ճակատագրի կամ առօրյայի որոշում,

ե. վերահսկող անձի կողմից անձի աշխատանքի, բնակության վայրի կամ այլ պայմանների ընտրություն ու դրանց վերահսկում,

զ. անձին օգնություն ցույց տալու կամ բարդ իրավիճակներից հանելու շահարկում՝ որպես վերահսկող անձին ենթարկվելու նախապայման,

է. անձի հոգեբանական կախվածության չարաշահում:

**8. Մարդկանց շահագործման ձևերի ցուցիչներն են՝**

1) պոռնկության շահագործման առնչությամբ՝

ա. սեռական ծառայությունների բնույթի կամ դրանց մատուցման համար համաձայնության բացակայություն,

բ. դաշվածքների կամ շահագործողներին «պատկանելության» այլ նշանների առկայություն,

գ. հաճախորդներին կամ նրանց քանակն ընտրելու անհնարինություն,

դ. բնակության և սեռական ծառայությունների մատուցման վայրի նույնացում,

ե. սեռական ծառայությունների համար վարձատրության բացակայություն կամ դրա չնչինություն,

զ. սեռական ծառայության համար վճարված գումարների չփոխանցում անձին՝ խաբեությամբ, պատճառված ենթադրյալ վնասի, հաճախորդի դժգոհության պատճառով կամ այլ պատրվակներով,

է. նպատակակետ երկրի պետական լեզվով միայն սեռական բնույթի կամ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ բառերի իմացություն,

ը. չպաշտպանված ու ոչ ցանկալի կամ բռնի սեռական հարաբերությունների առկայություն և դրանցից հրաժարվելու

անհնարինություն,

թ. սեռական ծառայությունների մատուցում ամսվա այնպիսի օրերին, երբ ֆիզիոլոգիական վիճակով պայմանավորված կինը չէր ցանկանում մատուցել այդ ծառայությունները,

ժ. սեռական հարաբերության ձևն ընտրելու կամ որևէ ձևից հրաժարվելու անհնարինություն.

2) սեռական շահագործման այլ ձևերի առնչությամբ՝

ա. սեռական այլ ծառայությունների բնույթի կամ դրանց մատուցման համար համաձայնության բացակայություն,

բ. հաճախորդներին կամ նրանց քանակն ընտրելու անհնարինություն,

գ. բնակության և սեռական այլ ծառայությունների մատուցման վայրի նույնացում,

դ. սեռական այլ ծառայությունների համար վարձատրության բացակայություն կամ դրա չնչինություն,

ե. սեռական այլ ծառայության համար վճարված գումարների չփոխանցում անձին՝ խաբեությամբ, պատճառված ենթադրյալ վնասի, հաճախորդի դժգոհության պատճառով կամ այլ պատրվակներով,

զ. նպատակակետ երկրի պետական լեզվով միայն սեռական բնույթի կամ սեռական այլ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ բառերի իմացություն,

է. սեռական այլ ծառայությունների ձևն ընտրելու կամ որևէ ձևից հրաժարվելու անհնարինություն.

3) հարկադիր աշխատանքի կամ ծառայություն մատուցելուն կամ հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելու առնչությամբ՝

ա. աշխատանք կատարելու կամ ծառայություն մատուցելու համաձայնության բացակայություն կամ դրա կորզում,

բ. աշխատանք կատարելուց կամ ծառայություն մատուցելուց հրաժարվելու դեպքում սպառնալիք, բռնություն, կախվածության, խոցելի կամ այլ վիճակի օգտագործում,

գ. ապօրինի աշխատանքում ներգրավված կամ չգրանցված աշխատող լինելու փաստ, աշխատանքային պայմանագրի կամ այլ փաստաթղթավորման բացակայություն,

դ. աշխատանքի կամ ծառայության համար անհրաժեշտ համազգեստի և այլ անվտանգ պայմանների բացակայություն,

ե. պարտադիր արտաժամյա աշխատանքի կատարում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

զ. հանգստյան և տոն օրերին կամ գիշերային ժամերին աշխատանքի պարտադիրություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

է. չկանոնակարգված ու չնորմավորված աշխատանքի պարտադիրություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

ը. անվտանգության այնպիսի միջոցների կիրառում, որոնք նախատեսված են անձանց աշխատավայրերում պահելու, այլ ոչ թե անվտանգությունն ապահովելու համար,

թ. կամքին հակառակ աշխատելը կամ ծառայություն մատուցելը՝ որպես պարտականության ներկայացում,

ժ. անհիմն կարգապահական պատասխանատվության, տուգանքի կամ այլ պատասխանատվության ենթարկում,

ժա. աշխատանքային միգրանտի կարգավիճակի օրինականացման խոչընդոտում,

ժբ. աշխատանքի կամ ծառայության համար գումարների չվճարում՝ խաբեությամբ, պատճառված ենթադրյալ վնասի, հաճախորդի դժգոհության պատճառով կամ այլ պատրվակներով,

ժգ. աշխատողներից անհարկի կամ ուռճացված պահումների առկայություն գործիքների, սննդի, բնակության, կոմունալ վճարումների և այլ պայմանների համար,

ժդ. աշխատավարձը ոչ թե աշխատողին, այլ նրա ընտանիքի անդամներին կամ այլ անձանց փոխանցում, որի ստուգման հնարավորությունն աշխատողը չուներ,

ժե. կատարված աշխատանքների ծավալի և բնույթի ավելացում՝ առանց աշխատողի համաձայնության կամ առանց աշխատավարձը համաչափորեն ավելացնելու,

ժզ. աշխատանքի կամ բնակության վայրը միայն գործատուի կամ նրա կողմից նշանակված անձի ուղեկցությամբ լքելու հնարավորություն,

ժէ. հակաիրավական գործողություններ կատարելու համար հարկադրանքի ցանկացած ձևի կիրառումը, այդ գործողությունների կատարման հարկադրումը, այլընտրանքի բացառումը.

4) ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելու առնչությամբ՝

ա. անձի նկատմամբ բացարձակ վերահսկողություն,

բ. որպես գույք՝ անձի նկատմամբ վերաբերմունք,

գ. անձի մասնավոր կյանք ունենալու բացարձակ արգելք, ներառյալ՝ ընտանիք կազմելու, սեռական կյանքով ապրելու վերահսկողություն,

դ. բնակության վայրից դուրս գալու անհնարինություն և «ստրկատիրոջ» ընտանիքի հետ ապրելու պարտադիր պայման,

ե. կատարված աշխատանքի կամ մատուցած ծառայության դիմաց աշխատավարձի չտրամադրում կամ չնչին չափով տրամադրում,

զ. բնակության վայրը միայն «ստրկատիրոջ» կամ նրա կողմից նշանակված անձի ուղեկցությամբ լքելու հնարավորություն,

է. ընտանիքի անդամների, մերձավորների կամ այլ անձանց հետ շփման անթույլատրելիություն.

5) առքի կամ վաճառքի առնչությամբ՝

ա. անձի նկատմամբ բացարձակ վերահսկողության իրականացումը,

բ. անձի վաճառք (առք) կամ վերավաճառք,

գ. անձի նկատմամբ վերահսկողական լիազորությունների վաճառք (առք) կամ վերավաճառք.

6) բջիջը, օրգանը, հյուսվածքը, կենսաբանական նյութերը կամ հեղուկները կենդանի դոնորից վերցնելու առնչությամբ՝

ա. օրենսդրության խախտմամբ բջիջ, օրգան, հյուսվածք, կենսաբանական նյութ կամ հեղուկ վերցնել,

բ. բջիջ, օրգան, հյուսվածք, կենսաբանական նյութ կամ հեղուկ վերցնել՝ դրա համար չնախատեսված վայրում,

գ. բջիջ, օրգան, հյուսվածք, կենսաբանական նյութ կամ հեղուկ վերցնել՝ դրա համար մասնագիտական կրթություն ու լիազորություն չունեցող անձի կողմից,

դ. բջիջ, օրգան, հյուսվածք, կենսաբանական նյութ կամ հեղուկ վերցնել՝ անձի խոցելիությունը, մասնավորապես՝ պարտքային կախվածությունն օգտագործելով,

ե. բջիջ, օրգան, հյուսվածք, կենսաբանական նյութ կամ հեղուկ վերցնել՝ անձի կամ նրա ընտանիքի նկատմամբ բռնություն կամ սպառնալիք կիրառելու արդյունքում,

զ. բջիջ, օրգան, հյուսվածք, կենսաբանական նյութ կամ հեղուկ վերցնել՝ առանց համապատասխան բժշկական հետազոտություններ կատարելու կամ համապատասխանելիությունը որոշելու:

9. Հատուկ կատեգորիայի զոհերի վերաբերյալ 6-րդ և 8-րդ կետերում ներկայացված ցուցիչներից զատ, կիրառելի են նաև հետևյալ ցուցիչները՝

1) ծնողների, հոգաբարձուների կամ խնամակալների հետ շփվելու անհնարինություն.

2) կոնկրետ տարիքի երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի համար ոչ բնորոշ վարքագծի առկայություն. սեքսուալ հագուստ, ալկոհոլային խմիչքի օգտագործում, ոչ բնորոշ բառապաշար և այլն.

3) երեխայի կրթության ստացման բացառում.

4) երեխայի խաղալու կամ հանգստի համար ժամանակի բացառում.

5) տարբեր երեխաների՝ բնակության մեկ վայրում պահում, իսկ անհնազանդներին՝ առանձնացում կամ մեկուսացում.

6) երեխայի ներգրավում իր տարիքի համար ոչ համապատասխան աշխատանքներ կատարելուն կամ ծառայություններ մատուցելուն.

7) երեխայի ներգրավում իր տարիքի համար արգելված կամ չթույլատրվող աշխատանքների կատարմանը կամ ծառայությունների մատուցմանը.

8) երեխայի՝ իր տարիքին ոչ համապատասխան իրազեկվածություն սեռական կյանքի և սեռական հարաբերության մասին, սեռական ծառայության համար տարբեր պարագաների առկայություն.

9) երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի կողմից ալկոհոլային խմիչք, թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելու փաստ.

10) երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի մոտ հատուկ դաջվածքների առկայություն.

11) երեխայի անօրինական որդեգրում և տեղափոխում այլ պետություն.

12) անօգնական վիճակում գտնվողի բուժման արգելք կամ խոչընդոտում.

13) անօգնական վիճակում գտնվողի ներգրավում նրա առողջությանը վտանգող գործողություններում կամ գործունեության մեջ.

14) երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի պահանջմունքների բավարարում՝ բացառապես աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու դիմաց:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետի աշխատակազմի**
**ղեկավար** **Ա. Հարությունյան**

06.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 6 հոկտեմբերի 2022 թվական:**